


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. փետրվարին


/վերլուծություն/

2013թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14571 գործարքներ, որոնց քանակը 2013թ. հունվարի համեմատ աճել է 46.6%-ով, իսկ 2012թ. փետրվարի համեմատ՝ 1.3%-ով:

2013թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3641 օտարման գործարքների 74.9%-ը կազմել են առուվաճառքները, 24.6%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.1%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.1%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. փետրվարին, 2013թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 17.6%-ով, իսկ 2012թ. փետրվարի համեմատ՝ 20.8%-ով:

2013թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 56.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. փետրվարին, 2013թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 25.3%-ով, իսկ 2012թ. փետրվարի համեմատ՝ 0.2%-ով:

2013թ. փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2012թ.	փետրվար 2013թ.	հունվար 2013թ.
<b>Կենտրոն</b>	400000	424100	422050
<b>Արաբկիր</b>	334000	352100	350000
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	260100	280200	279100
<b>Նոր-Նորք</b>	225000	245100	243050
<b>Ավան</b>	234000	255000	255000
<b>Էրեբունի</b>	233400	245200	243500
<b>Շենգավիթ</b>	229100	251200	249100
<b>Դավթաշեն</b>	254600	269900	269100
<b>Աջափնյակ</b>	221000	243000	240500
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	219800	235600	235000
<b>Նուբարաշեն</b>	140100	146200	145100
<b>Միջինը Երևանում</b>	<b>250100</b>	<b>268000</b>	<b>266400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. փետրվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. հունվարի համեմատ, աճել են 0.6%-ով:

2013թ. փետրվարին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 401 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. փետրվարի համեմատ աճել է 32.8%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 22.3%-ով:

2013թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2012թ.	փետրվար 2013թ.	հունվար 2013թ.
<b>Արագածոտն</b>	<b>Աշտարակ</b>	108000	114000	114000
	<b>Ապարան</b>	48000	54200	54000
	<b>Թալին</b>	60800	62500	62300

<b>Արարատ</b>	<b>Արտաշատ</b>	90000	94500	94200
	<b>Մասիս</b>	105000	113000	112000
	<b>Վեդի</b>	95000	98500	98500
	<b>Արարատ</b>	70000	75100	75100
<b>Արմավիր</b>	<b>Վաղարշապատ</b>	150000	153500	153200
	<b>Արմավիր</b>	114700	120000	119200
	<b>Մեծամոր</b>	85000	86500	86500
<b>Գեղարքունիք</b>	<b>Սևան</b>	96000	99000	99000
	<b>Գավառ</b>	51000	59000	58200
	<b>Մարտունի</b>	105100	107600	107400
	<b>Վարդենիս</b>	32000	42050	42050
	<b>Ճամբարակ</b>	21000	26500	26100
<b>Լոռի</b>	<b>Վանաձոր</b>	82500	88000	87200
	<b>Ստեփանավան</b>	76000	74500	74500
	<b>Սպիտակ</b>	100000	99800	99800
	<b>Ալավերդի</b>	49000	54500	54500
	<b>Տաշիր</b>	40000	44100	44100
	<b>Թումանյան</b>	11000	11000	11000
	<b>Շամլուղ</b>	8000	8000	8000
	<b>Ախթալա</b>	19500	19800	19800
<b>Կոտայք</b>	<b>Աբովյան</b>	150000	153200	153200
	<b>Նոր Հաճն</b>	127900	128500	128500
	<b>Բյուրեղավան</b>	106800	107100	107100
	<b>Եղվարդ</b>	108000	109300	109300
	<b>Հրազդան</b>	57538	62500	62500
	<b>Ծաղկաձոր</b>	295000	292500	292500
	<b>Չարենցավան</b>	82500	85050	84000
<b>Շիրակ</b>	<b>Գյումրի</b>	101000	109300	109300
	<b>Արթիկ</b>	64100	66300	66300
	<b>Մարալիկ</b>	35600	40100	40100
<b>Սյունիք</b>	<b>Գորիս</b>	115000	118200	117100
	<b>Կապան</b>	88000	91000	90200
	<b>Սիսիան</b>	78100	89500	89050
	<b>Մեղրի</b>	68500	77100	76200
	<b>Ագարակ</b>	39700	44200	44200
	<b>Քաջարան</b>	100000	94300	94300
	<b>Դաստակերտ</b>	8000	8000	8000
<b>Վայոց Ձոր</b>	<b>Վայք</b>	82000	92500	92500
	<b>Եղեգնաձոր</b>	120000	120000	119500
	<b>Ջերմուկ</b>	92000	110500	110500
<b>Տավուշ</b>	<b>Դիլիջան</b>	100000	109600	109100
	<b>Իջևան</b>	110000	117000	116200
	<b>Բերդ</b>	49500	58100	58050
	<b>Նոյեմբերյան</b>	40200	46700	46500
	<b>Այրում</b>	24500	29000	29000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. հունվարի համեմատ, աճել են 0.4%-ով:

2013թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 399 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 104, մարզերում միասին վերցրած՝ 295: 2013թ. փետրվարին, 2013թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 27.5%-ով, ընդ որում Երևանում՝ 22.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 29.4%-ով: 2012թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 20.2%-ով, ընդ որում Երևանում՝ 31.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 16.6%-ով:

2013թ. փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	փետրվար 2012թ.	փետրվար 2013թ.	հունվար 2013թ.
<b>Կենտրոն</b>	459000	473000	471100
<b>Արաբկիր</b>	365000	379800	378100
<b>Քանաքեռ Զեյթուն</b>	274700	292300	291100
<b>Նորք Մարաշ</b>	301050	315500	314000
<b>Ավան</b>	249000	268250	267050
<b>Էրեբունի</b>	219500	237000	235000
<b>Շենգավիթ</b>	239300	252500	251000
<b>Դավթաշեն</b>	257500	273200	271700
<b>Աջափնյակ</b>	236300	247000	244100
<b>Մալաթիա Սեբաստիա</b>	220000	235600	234300
<b>Նուբարաշեն</b>	144800	148000	147600
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>269600</b>	<b>283800</b>	<b>282300</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. փետրվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. հունվարի համեմատ աճել են 0.5%:

2013թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2012թ.	փետրվար 2013թ.	հունվար 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	130050	135600	135100
	Ապարան	52100	59000	58800
	Թալին	70000	68650	68650
Արարատ	Արտաշատ	100000	99200	98900
	Մասիս	112000	114600	114000
	Վեդի	99850	101400	101400
	Արարատ	88000	88000	87700
Արմավիր	Վաղարշապատ	145100	152300	152300
	Արմավիր	100000	106500	106500
Գեղարքունիք	Սևան	90900	94200	94200
	Գավառ	45500	57100	56700
	Մարտունի	90100	95000	94600
	Վարդենիս	34000	39800	39000
	Ճամբարակ	26000	29850	29850
Լոռի	Վանաձոր	95050	99500	98800
	Ստեփանավան	87000	89200	88400
	Սպիտակ	111300	113600	113600
	Ալավերդի	42150	48300	48300

	Տաշիր	51050	51900	51900
	Թումանյան	12500	12000	12000
	Շամլուղ	13200	13200	13200
	Ախթալա	29400	29600	29600
Կոտայք	Աբովյան	143500	154700	154700
	Նոր Հաճն	128100	129800	129800
	Բյուրեղավան	120000	120000	120000
	Եղվարդ	115000	116100	116100
	Հրազդան	77000	82400	82400
	Ծաղկաձոր	303700	305000	305000
	Չարենցավան	74500	82500	82500
Շիրակի	Գյումրի	115800	118000	118000
	Արթիկ	60000	63100	63100
	Մարալիկ	48000	51700	51700
Սյունիք	Գորիս	126900	129200	129100
	Կապան	97800	99100	98700
	Սիսիան	87800	94000	93400
	Մեղրի	74500	83000	83000
	Ագարակ	46000	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց Ձոր	Վայք	82100	89000	89000
	Եղեգնաձոր	109850	116600	116600
	Ջերմուկ	118700	130000	129400
Տավուշ	Դիլիջան	103100	111100	111100
	Իջևան	119900	122000	122000
	Բերդ	57850	59000	59000
	Նոյեմբերյան	46000	47000	46100
	Այրում	34500	34600	34600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. հունվարի համեմատ, աճել են 0.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. փետրվարին հանրապետությունում օտարվել են 1129 միավոր /543.36 հա/ հողեր, որից Երևանում՝ 106 միավոր /5.97 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 637 միավոր /496.33 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /0.32 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 340 միավոր /31.58 հա/, որից Երևանում՝ 47 միավոր /1.61 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 130 միավոր /7.31 հա/, որից Երևանում՝ 52 միավոր /3.99 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 12 միավոր /1.92 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.06 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր /5.73 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր /0.50 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. փետրվարին հանրապետությունում օտարված հողերից 918 միավորի /442.28 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 93 միավոր /5.47 հա/, նվիրատվության գործարքներ՝ 203 միավորի /100.49 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /0.36 հա/ և փոխանակության գործարքներ՝ 8 միավորի /0.59 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.15 հա/:

Հանրապետությունում 2013թ. փետրվարին, 2012թ. փետրվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 21.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 3.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 52.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 130.27 հա, որից 125.28 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.5%-ը կամ 225 գործարքներ /88.70 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 61 միավոր /3.37 հա/, իսկ 74.7%-ը կամ 686 միավորը /353.16 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 32 միավոր /2.10 հա/: 2013թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 7 գործարք /0.41 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.06	21	0.11	39	3.21	6	0.32	0	0.00	16	1.10	10	0.68
Արագածոտն	67	21.66	0	0.00	0	0.00	10	0.19	51	36.63	0	0.00	20	1.79	5	0.19
Արարատ	6	20.14	1	0.01	1	0.10	1	0.10	68	57.88	0	0.00	38	3.28	6	0.07
Արմավիր	3	4.09	0	0.00	2	0.10	1	0.02	92	121.19	0	0.00	43	4.54	5	0.32
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	4	0.44	0	0.00	28	14.29	0	0.00	27	3.32	1	0.02
Լոռի	0	0.00	0	0.01	1	0.02	4	0.03	24	16.00	1	0.72	7	1.07	6	0.07
Կոտայք	15	24.40	0	0.00	6	0.31	3	0.09	75	39.18	0	0.00	44	3.95	4	0.14
Շիրակ	0	0.00	0	0.00	1	0.01	2	0.08	25	18.86	0	0.00	14	1.95	1	0.01
Սյունիք	1	2.61	4	0.12	0	0.00	3	0.33	8	9.65	0	0.00	3	0.26	5	0.62
Վայոց Ձոր	6	6.47	1	0.10	3	0.22	1	0.004	9	1.40	0	0.00	8	1.00	2	0.06
Տավուշ	2	1.22	1	0.001	4	0.23	4	0.40	19	7.20	0	0.00	10	1.07	1	0.02
Ընդամենը	100	80.59	8	0.30	43	1.54	68	4.45	405	322.60	1	0.72	230	23.33	46	2.20

Ստորև ներկայացվում է 2013թ. փետրվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

Ընդամենը	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր						Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի		բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի								հասարակ կան կառուցապ. հողերի			
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	44	1.06	1	0.06	21	0.11	22	0.89	17	2.32	0	0.00	0	0.00	0	0.00	17	2.32
Արագածոտն	10	0.19	0	0.00	0	0.00	10	0.19	3	9.33	3	9.33	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	9	20.35	6	20.14	1	0.01	1	0.10	1	0.10
Արմավիր	3	0.12	0	0.00	2	0.10	1	0.02	3	4.09	3	4.09	0	0.00	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	1	0.08	0	0.00	1	0.08	0	0.00	3	0.36	0	0.00	0	0.00	3	0.36	0	0.00
Լոռի	4	0.04	0	0.00	1	0.02	3	0.02	2	0.02	0	0.00	1	0.01	0	0.00	1	0.01
Կոտայք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	23	24.71	14	24.31	0	0.00	6	0.31	3	0.09
Շիրակ	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	2	0.08	0	0.00	0	0.00	1	0.01	1	0.07
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	3.06	1	2.61	4	0.12	0	0.00	3	0.33
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	6.794	6	6.47	1	0.10	3	0.22	1	0.004
Տավուշ	2	0.05	0	0.00	2	0.05	0	0.00	9	1.801	2	1.22	1	0.001	2	0.18	4	0.40
Ընդամենը	65	1.55	1	0.06	27	0.36	37	1.13	90	72.92	35	68.17	8	0.24	16	1.18	31	3.32

2013թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 65 գործարք /12.42 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. փետրվարին, 2012թ. փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 25.0%-ով: Ընդ որում, Երևանում՝ նվազել է 10.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 27.6%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 76.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 47.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 4 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. փետրվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների						Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների					
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին		
<b>Արագածոտնի մարզ</b>												
Աշտարակ	2	6.64	54.0	87.1	70.6	26	11.55	365.0	12000.0	3565.4		
Ապարան						9	2.68	86.5	2727.3	720.2		
Թալին	1	2.69	38.1	38.1	38.1	13	17.12	93.6	5494.5	650.0		
Ծաղկահովիտ						2	4.15	79.5	1000.0	268.1		
<b>Արարատի մարզ</b>												
Արտաշատ						38	11.90	335.1	10833.3	2838.3		
Մասիս	5	16.14	116.5	2061.3	726.4	13	36.20	200.0	11904.8	3152.7		
Վեդի	1	4.00	65.0	65.0	65.0	17	9.78	207.0	10795.1	1855.3		
<b>Արմավիրի մարզ</b>												
Արմավիր	3	4.09	70.9	70.9	70.9	44	42.96	294.3	9090.0	1435.0		
Բաղրամյան						8	42.39	90.6	2561.1	783.5		
Վաղարշապատ						33	15.85	444.4	11764.7	2368.1		

Գեղարքունիքի մարզ										
Գավառ						15	5.52	199.8	1875.0	415.2
Ճամբարակ						1	0.98	60.5	953.3	348.2
Մարտունի						3	0.38	51.1	2850.0	735.5
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						6	3.61	41.2	2575.1	408.0
Լոռու մարզ										
Ալավերդի						4	1.43	170.4	6424.2	610.0
Գուգարք								234.6	6065.9	751.3
Սպիտակ								250.0	5555.5	732.3
Ստեփանավան						2	0.64	90.6	1686.6	315.0
Տաշիր						11	3.80	45.3	1384.4	152.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	7	18.82	177.5	415.6	206.9	23	16.08	279.3	11942.7	4500.0
Եղվարդ	7	5.48	105.0	1227.2	624.9	26	15.17	174.4	11971.8	2643.0
Հրազդան						26	7.93	130.5	10256.4	1740.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	3.13	252.0	1693.1	610.0
Ամասիա						1	0.14	40.9	261.0	128.5
Անի						6	7.22	110.6	546.9	378.0
Աշոցք						7	5.50	58.5	215.8	126.1
Արթիկ						7	2.87	79.4	1428.6	405.0
Սյունիքի մարզ										
Գորիս								92.6	1023.2	718.0
Կապան	1	2.61	137.5	137.5	137.5	1	0.87	120.0	841.6	350.0
Մեղրի						2	0.19	193.0	3000.0	725.5
Սիսիան						5	8.59	46.3	1977.4	530.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	0.80	125.0	10000.0	1900.0
Վայք	6	6.47	68.9	71.9	70.4	2	0.28	58.8	1430.7	625.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	0.33	213.3	3783.8	675.3
Իջևան						1	1.41	267.5	9454.5	1240.0
Դեկտեմբերյան	2	1.22	295.6	1039.5	667.6	15	5.46	46.7	7368.4	865.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. փետրվարին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվելագույն	Միջին			Նվազագույն	Մասվելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						18	16139.0	130.7	22200.0	2575.0
Ապարան						1	1085.0	124.1	609.6	389.2
Թային						1	700.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	982.1	407.3	407.3	407.3	8	8089.3	173.9	7140.3	894.5
Մասիս						21	15584.6	187.5	25000.0	1210.0



Վեղի						9	9130.0	126.1	5000.0	661.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						16	20337.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						2	3200.0	100.0	833.3	239.1
Վաղարշապատ						23	20346.0	197.4	26528.4	1527.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	10220.0	186.6	1084.3	678.0
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	3	3600.0	219.8	219.8	219.8	12	12548.5	119.3	5000.0	282.5
Սևան						2	2661.5	240.0	3110.4	315.0
Վարդենիս						3	5765.4	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	800.0	114.3	1388.9	216.6
Գուգարք						1	604.0	77.9	14083.3	1160.0
Սպիտակ						3	5470.0	104.9	1348.3	206.0
Ստեփանավան						2	3850.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	4	2123.4	2371.4	3673.9	2755.3	15	13669.8	264.5	35353.5	1984.0
Եղվարդ	2	971.0	2737.0	5471.4	4104.2	19	17665.0	173.6	27000.0	2854.3
Հրազդան						10	8170.0	117.7	34848.5	1318.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	133.1	4882.0	4882.0	4882.0	6	5510.0	113.6	18750.0	333.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						4	5015.9	67.9	180.6	168.0
Աշոցք						1	5050.0	40.8	144.0	63.2
Արթիկ						3	3900.0	111.8	5000.0	216.6
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	367.9
Կապան								67.9	2638.9	300.0
Մեղրի						2	1360.0	68.5	632.9	205.0
Սիսիան						1	1230.0	123.5	875.0	204.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	7934.0	96.7	7659.6	501.9
Վայք	3	2239.4	850.6	852.9	851.4	1	450.0	120.7	1448.3	210.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	112.0
Իջևան						9	8148.4	74.1	14423.1	525.0
Դեկտեմբերյան	2	1839.9	317.2	1100.2	708.7	1	2601.0	125.0	1948.1	225.0

2013թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 780 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.4%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 69.6%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. փետրվարին, 2013թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 37.8%-ով, իսկ 2012թ. փետրվարի համեմատ՝ 42.1%-ով:

2013թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 59 բնակարանների, 94 անհատական բնակելի տների, 347 հասարակական, 100 արտադրական նշանակության օբյեկտների, 165 հողերի և 13 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 46 վարձակալության գործարքների, այդ թվում 40 միավոր /0.27 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. հունվարի համեմատ աճել է 3.3 անգամ, իսկ 2012թ. փետրվարի համեմատ նախորդ տարվա համեմատ՝ 11.5%-ով: 2013թ. փետրվարին հանրապետությունում վարձակալված 3952.16 հա հողերից 0.60 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3951.56 հա հողերից 3733.13 հա կազմում են

գյուղատնտեսական նշանակության, 1.00 հա արդյունաբերական օբյեկտների, 7.98 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 3616.66 հա, որից 3616.35 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1606 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.0%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. հունվարի համեմատ աճել է 79.6%-ով, իսկ 2012թ. փետրվարի համեմատ նվազել՝ 1.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.1%, առանձնատների /26.0%, հասարակական նշանակության օբյեկտների /12.1%/ և հողերի /8.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 829 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. հունվարի համեմատ աճել է 61.9%-ով, իսկ 2012թ. փետրվարի համեմատ նվազել՝ 10.3%-ով:

2013թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 151.66 հա հողեր, որից 2.79 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 90.2%-ը կամ 136.84 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.40 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 75.58 հա, որից 72.08 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. փետրվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 102 գործարքներ, որից 62-ը՝ Երևանում: 2013թ. հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 47.8%-ով, ընդ որում Երևանում՝ 47.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 48.1%-ով: 2012թ. փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 5.1 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.6 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 13.3 անգամ:

2013թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1856 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. հունվարի համեմատ աճել է 56.5%-ով, իսկ 2012թ. փետրվարի համեմատ՝ 3.6 անգամ: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /29.0%/:

## **« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**